ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ

N ԲԸԱՀԾՁԲ-ԱԻՆ-17-3-50

ք. Երևան «24» «05» 2017թ.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը , ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ.Հայրապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» ՊՈԱԿ -ն, ի դեմս Կազմակերպության տնօրեն Կ. Աթոյանի որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան՝ պայմանագրի N 1.1 հավելվածով տրված հասցեներում և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **8 142 800** (ութ միլիոն մեկ հարյուր քառասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12. 2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԻՆ	«Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/13 «Անելիք Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 11811001595500
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 01244592
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____ Հայրապետյան (ստորագրություն)	_____ Կ. Աթոյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված 1
<<24>><<05>>. 2017թ. կնքված
N ԲԸՀԾՁԲ-ԱԻՆ-17-3-50 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ/ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ/
1	ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Պայքար կրծողների դեմ մեխանիկական եղանակով /թակարդ, վերշա/ և քիմիական մեթոդով՝ օգտագործելով թունաքիմիկատներ /լանիրատ, բրոմդիալոն, ցինկֆոսֆիդ/, որոնք արգելված չեն ՄԱԿ-ի կողմից և թույլատրվում են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Ծառայությունը կատարել սպասարկող կազմակերպության բանվորական ուժով և միջոցներով: Տարածքների ուսումնասիրության հաճախականությունն՝ ամիսը 2 անգամ: Ընդհանուր մակերեսը 42127.25 մ²:

Աշխատանքների մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց	20.12.2017թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԻՆ

ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/13
«Անելիք Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 11811001595500

ՀՎՀՀ 01244592

Տնօրեն՝

Կ. Աթոյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 1.1
<<24>><<05>>. 2017թ. կնքված
N ԲԸԱՀԾՁԲ-ԱԻՆ-17-3-50 *ծածկագրով գնման պայմանագրի*

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ենթակա տարածքների ցանկ

h/h	Ստորաբաժանման անվանումը	Հասցեն	Ընդհանուր մակերեսը (քառ. մ)
1.	Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոն	ք. Երևան, Շիրակի 3-րդ նրբ. № 6	3921.9
2.	Տեխնիկայի և սարքավորումների վերանորոգման բազա	ք. Երևան,Միկոյան 2/21	1430.6
3.	Փրկարարական ուժերի վարչություն	ք. Երևան, Գլինկայի 13	2127.3
4.	№ 1 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան,Իսակովի 9/1	818.75
5.	№ 2 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան,Սևանի 124	965.3
6.	№ 4 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան,Շարուրի 22/1	1017.4
7.	№ 5 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան,Ղափանցյան 7/3	714.2
8.	№ 6 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան,Արցախի 4, 5/7 նրբ.	650.8
9.	№ 7 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան,Հասրաթյան 9/1	980.6
10.	№ 8 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Մյասնիկյան 1	1421.6
11.	№ 9 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան,Գյուլբեկյան 12/2	729.95
12.	№ 11 Հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Երևան, Աճառյան 44/5	219.9
13.	Հատուկ հրշեջ ջոկատ	ք. Երևան, Ա. Միկոյան 109/12	772.1
14.	Աշտարակի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Աշտարակ,Ղազար Փարպեցու 2	329.8
15.	Ապարանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ապարան, Գայի 17	470.71
16.	Արագածի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Ծաղկահովիտ 1-ին փ, շ 2	528.78
17.	Թալինի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Թալին, Երևանյան խճուղի 10	1213.78
18.	Արտաշատի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փող., շ. 48	290.4
19.	Մասիսի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Մասիս, Մասիսի 4-րդ շ	645.5
20.	Վեդու հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վեդի, Արցախի 7	429.85
21.	Բաղրամյանի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Մյասնիկյան, Իսակովի 19շ	82.0
22.	Վաղարշապատի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վաղարշապատ, Աթարբեկյան 11	598.5
23.	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն	ք. Գավառ, Նալբանդյան 116	1200.0
24.	Սևանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Սևան, Նաիրյան 142	548.51
25.	Մարտունու հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Մարտունի, Սայաթ Նովա 40	235.3
26.	Վարդենիսի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վարդենիս, Չարենցի 64	247.2
27.	Գավառի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Գավառ,Հ.Ազատամարտիկի 5	518.0
28.	Ճամբարակի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ճամբարակ, Տիգրան Մեծի 1	478.1
29.	Լոռու մարզային փրկարարական վարչություն	ք. Վանաձոր, Տ. Մեծ 3/1	422.3
30.	Վանաձորի № 1 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վանաձոր, Երևանյան խճուղի 62	1157.7
31.	Սպիտակի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Սպիտակ, Մուրացանի 2	229.5
32.	Գուգարքի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Գուգարք	812.2

33.	Թումանյանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ալավերդի Թումանյան փ	553.4
34.	Ստեփանավանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ստեփանավան, Ս. Նշանի 8	290.5
35.	Տաշիրի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Տաշիր, Գորկու 18	665.7
36.	Հրազդանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Հրազդան, Միքայելյան 13	369.08
37.	Աբովյանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Աբովյան, Հատիսի 4	686.8
38.	Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Չարենցավան, Հոկտեմբերյան 2	403.6
39.	Եղվարդի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Եղվարդ,Սաֆարյան 1-ին նրբ.	164.5
40.	Շիրակի մարզային փրկարարական վարչություն	ք. Գյումրի, Ղուկասյան 30/6	930.19
41.	Գյումրիի № 1 հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Գյումրի, Ջիվանու 64	1068.11
42.	Արթիկի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Արթիկ, Շահումյան 5	523.0
43.	Ախուրյանի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Ախուրյան	295.0
44.	Աշոցքի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Աշոցք	367.83
45.	Անիի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Մարալիկ, Շահինյան փ.	379.46
46.	Ամասիայի հրշեջ փրկարարական ջոկատ	գ. Ամասիա, 2-րդ օբյեկտ 4	284.91
47.	Կապանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Կապան, Ա.Մանուկյան 1-ին նրբ.	2616.6
48.	Սիսիանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Սիսիան, Իսրայելյան 6	480.58
49.	Գորիսի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Գորիս, Բակունցի 2	502.3
50.	Քաջարանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Քաջարան, Լեռնագործների 2	1069.3
51.	Մեղրիի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Մեղրի, Բաղրամյան փ.	235.3
52.	Եղեգնաձորի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Եղեգնաձոր, Շահումյան 22	631.3
53.	Ջերմուկի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Ջերմուկ, Ձախափնյակի 1բ	670.9
54.	Վայքի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Վայք	187.4
55.	Տավուշի մարզային փրկարարական վարչություն	ք. Իջևան, Արցախյան 4	281.7
56.	Դիլիջանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Դիլիջան, Շամախյան 4	687.2
57.	Նոյեմբերյանի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Նոյեմբերյան, Կամոյի 1	333.86
58.	Տավուշի հրշեջ փրկարարական ջոկատ	ք. Բերդ, Թումանյան 1	1240.2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**42127.25**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԻՆ

ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

_____ Գ. Բայրապետյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն»
ՊՈԱԿ

ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/13
«Անելիք Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 11811001595500

ՀՎՀՀ 01244592

Տնօրեն՝

_____ Կ. Աթոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
«24» «05» 2017 թ. կնքված

N ԲԸԱՀՇՁԲ-ԱԻՆ-17-3-50 ծածկագրով գնման պայմանագրի
ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒՅԾՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Վ Ճ Ա Ր Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց*

ՀՀ Դրամ

N	Տնտ. դասակարգման հոդվածի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում								
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը Տարի
1	Կոմունալ ծառայություններ	4071400	4071400	6107100	6107100	6107100	8142800	8142800	8142800	8 142 800

***Վճարման ժամանակացույցը ներկայացվում է աճողական կարգով:**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ԱԻՆ

ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011001352

ՀՎՀՀ 00153247

Աշխատակազմի ղեկավար՝

Գ. Հայրապետյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/13

«Անելիք Բանկ» ՓԲԸ

Հ/Հ 11811001595500

ՀՎՀՀ 01244592

Տնօրեն՝

Կ. Աթոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
<<24>><<05>>. 2017թ. կնքված
ծածկագրով գնման պայմանագրի

N ԲԲԱՀՇՁԲ-ԱԻՆ-17-3-50

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

¦ ¦ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____

Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և

Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը, հիմք ընդունելով նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը նդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
<<26>><<05>>. 2017թ. կնքված
N ԲԸԱՀԾՁԲ-ԱԻՆ-17-3-50 *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն